ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿՐՏՍԵՐ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԸՆՏԱՆԻՔԻ,ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԵՐԿՐՈՐԴ
ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ /ծածկագիր՝ 64-4.2-7/

Բաժնի վարիչի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ որդեգրել ցանկացող անձանց, նրանց ընտանիքի անդամներին, երեխային /երեխաներին/, խնամատար ընտանիքի անդամներին, երեխային մանկատուն կամ խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատություն տեղավորելու անհրաժեշտության դեպքում՝ նրանց կենսապայմաններին ծանոթանալու նպատակով.

- խնամակալության և հոգաբարձության մարմիններից ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների պատկանող անձանց տարածքային հաշվառման մատյանները, ձևավորում է ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքում բնակվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տվյալների տարածքային շտեմարանը. կազմում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր.
- վարում է Մարզի տեղեկատվական բազայում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի հաշվառումը.
- Բաժնի վարիչի հանձնարարությամբ իրականացնում է Բաժնի փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ,,Սոցիալական աշխատանք,, կամ ,,Սոցիալական մանկավարժություն,, մասնագիտությամբ բարձրագույն կրթություն.
- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ,,բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի /փաստաթղթերի/ պատճենը /պատճենները/.
- աշխատանքային գրքույկի պատճենը / ունենալու դեպքում/.
- քաղաքացիական ծառայության կրտսեր պաշտոն զբաղեցնելու հավաստագրի պատճենը.

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զինակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար 3.4 չափսի.
- անձնագրի պատճենը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10^{00}-ից մինչև 13^{00}-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2012թ. հուլիսի 24-ը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության կրտսեր թափուր պաշտոն զբաղեցնելու համար կարող են դիմել մարզպետարանի աշխատակազմ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, հեռ. 0264-2-43-39/: